ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ/ԺԱՌԱՆԳՆԵՐ

4 հարցերի կարճ պատասխաններ

1 Ովքե՞ր կարող են լինել ժառանգներ:

Ըստ կտակի և ըստ օրենքի ժառանգներ կարող են լինել **ժառանգության բացման օրը ողջ,** ինչպես նաև ժառանգատուի կենդանության ժամանակ սաղմնավորված և ժառանգությունը բացվելուց հետո **ողջ ծնված** քաղաքացիները:

Ըստ կտակի ժառանգներ կարող են լինել նաև ժառանգության բացման օրը գոյություն ունեցող իրավաբանական անձինք, Հայաստանի Հանրապետությունը և համայնքները, ինչպես նաև օտարերկրյա պետություններն ու միջազգային կազմակերպությունները:

2 Ովքե՞ր են ըստ օրենքի ժառանգները, և ի՞նչ հերթականությամբ են ստանում ժառանգությունը:

Ըստ օրենքի ժառանգները ստանում են ժառանգությունը հատուկ սահմանված հերթականությամբ՝

- **Առաջին հերթի** ժառանգներ - երեխաները, ամուսինը և ծնողները: Ժառանգատուի թոռները ժառանգում են ներկայացման իրավունքով:
- **Երկրորդ հերթի** ժառանգներ - հարազատ, համահայր կամ համամայր եղբայրներ և քույրեր: Ժառանգատուի եղբայրների և քույրերի երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով:
- **Երրորդ հերթի** ժառանգներ - հայրական և մայրական կողմի պապը և տատը:
- **Չորրորդ հերթի** ժառանգներ - ծնողների եղբայրներ և քույրեր (հորեղբայրներ, հորաքույրները, քեռիներ, մորաքույրներ): Ժառանգատուի հորեղբայրների և հորաքույրների ու քեռիների և մորաքույրների երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով:

**Յուրաքանչյուր հաջորդ հերթի ժառանգները ժառանգության իրավունք են ձեռք բերում նախորդ հերթի ժառանգների բացակայության, նրանց ժառանգությունից մեկուսացնելու, նրանց կողմից ժառանգությունը չընդունելու կամ ժառանգությունից հրաժարվելու դեպքերում: Նույն հերթի ժառանգները ժառանգում են հավասար բաժիններով:*

3 Ի՞նչ է «ներկայացման իրավունքով» ժառանգությունը:

Եթե ըստ օրենքի որևէ ժառանգ մահացել է նախքան ժառանգատուի մահանալը, ապա նրա բաժինը փոխանցվում է իր երեխաներին՝ ներկայացման իրավունքով, ովքեր ժառանգում են այդ բաժինը հավասարապես:

4 Արդյո՞ք որդեգրվածները և որդեգրողները համարվում են ըստ օրենքի ժառանգներ:



Ըստ օրենքի ժառանգության դեպքում որդեգրվածն ու նրա երեխաները մի կողմից, և որդեգրողն ու նրա ազգականները մյուս կողմից **հավասարեցվում են ըստ ծագման ազգականներին** (արյունակից ազգականներին):

**Որդեգրվածը և նրա երեխաները, ըստ օրենքի, չեն ժառանգում որդեգրվածի կենսաբանական ծնողների ու ըստ ծագման նրա այլ ազգականների մահից հետո:*

**Որդեգրվածի կենսաբանական ծնողները և ըստ ծագման նրա այլ ազգականները, ըստ օրենքի, չեն ժառանգում որդեգրվածի ու նրա երեխաների մահվանից հետո:*